ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունիսի 2026 թվականի N 3171

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

| Գնման ընթացակարգի | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չհամապատասխանելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| համարը | անվանումը | գնման գինը/ ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում դրոշակաձողի և Հայաստանի Հանրապետության դրոշի տեղակայման աշխատանքներ | 19 049 920 | «Բոսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն | 03031875 | ՀՀ, ք. Հրազդան, Երևանյան խճուղի 141 | 19.06.2026թ. | ՀՀ Կոտայքի մարզ Աբովյանի համայնքապետարան | «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ /խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ.../ և նույն հոդվածի 2-րդ մաս. ընկերությունը չի իրականացրել պայմանագրի ժամանակացույցով նախատեսված աշխատանքները, չի ներկայացրել շինարարության իրականացման համար նախատեսված բնակելի.հասարակական, արտադրական նշանակության կառույցների 1-ին կամ 2-րդ դասի համապատասխան լիցենզիա. ինչպես նաև բազմաթիվ անգամ նախազգուշացվել է և Աբովյան համայնքի ղեկավարի 12.06.2026 թվականի Ե-2890 գրությամբ ընկերությանը տրամադրված երեք աշխատանքային օրվա ընթացքում չի շտկել մատնանշված խախտումները | Առկա չէ |

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում և կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. հունիսի 26
ք. Աբովյան